

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻՆ




ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՔՆ



ՀԱԼԵՊ

ՏՊԳ.ՊԹ. Ա. ՏԵՐ ՍՈՀՈՎԵԼՈՆ

1934



F - MAR 2010

373
4-83

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ա.ԶԳ.Ա.ՅԻՒ. Վ.Ա.ՐՃԱՐԱՆԱՑ

ԲԵՐԻՈՅՑ ԹԵՄԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒՅԹ

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽԱՐՆ ԺՈՂՈՎՔՆ



ՀԱԼԵՅ

ՏՊԳՐԹ. Ա. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

1934

፩፭፻፭፳፭

Բերիոյ բեմին ազգային վարժարաններուն համար Ուսումնական Խորհուրդիս կողմէ պատրաստուած սոյն Կրթական Ծրագիրը երբ կը յանձնենք սպազրութեան, պարտ կ'զգանք խոստվանիլ թէ անբերի եւ վերջնական հրատարակութեան մը բնոյրը պիտի չունենայ ան, թեպէտեւ այդ գործին համար իրենց աշխատակցութիւնը բերած ըլլան բաղադիս երեք դպրոցներուն ՏԵՇՈՒՅՆԵՐ, որպէս Ուսումնական Խորհուրդի անդամ, եւ ձեռնիհաս ուսուցիչներու խումբ մը, որպէս Խորհրդակից:

Սակայն, այն վօսահութիւնը ունինք քէ Ծրագիրը զոր կը հանենք նրապարակ, պիտի ըլլայ նուազ անկատա՞ր եք քեմիս Կրական Պատ. Մարմինները եւ դպրոցներու յարգոյ Տնօրինները հանին յառաջիկայ, ինչպէս նաև միւս ուսումնական տարեցանի վախճանին, գրաւորապէս նաղորդել Խորհուրդիս իրենց դիտուրին եւ թելագրութիւնները:

ԱՐՄԵՆԻԱ, ԽՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻՆ Ա.94. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

29 *Oriens*. 1934

2015



63484-64

ἜΡΩΝ

ՄՈՆԱԿԱՐՏԵԶ.— (ԿՈԿՈՆ ԵՒ ԾԱՂԻԿ)

Բարոյախօսութիւն աստուածաշնչական պատկերներու վրայ (Աստուած իբրև գերագոյն հայր եւ ստեղծող ամենզերքի, Ադամ եւ Եւա, Աբրահամ եւ Իսահակ, Յովաչի Գեղեցիկ: Յիսուս եւ իր մայրը, Յիսուս՝ մանուկներու հետ):

Խաչակնքել, աղօթքի կենալ:

ՈՒՍՍՆԵԼԻ ԱԴՅՈԹ-ՔՆԵՐ ԵՒ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ .—
Հայր մեր, Սուաւօտ, լուսոյ (ա — գ համարներ), Ճա-
շակեսցուք, Զիյոնթիւն սեղանուա:

Ш. ЧУСТ

Հին եւ Նոր ոխտի պատմութենէն կարեւորագոյն դէպքեր եւ դէմքեր, Ս. զբական պատկերներու օգնութեամբ (Հին ՈՒԽՏԵՆ՝ Արարագործութիւնը, Խախածնողներ, Զրհեղեղը, Արքահամ, Յակոբ եւ ևսաւ, Յովսէփ, Մովսէս, Տասնաբանեան, Սամփոն, Դաւիթ, Առղոմն: ՆՈՐ ՈՒԽՏԵՆ՝ Յիսուսի ծնունդը, Մողերու գլուխոր, Յովհաննէս Մկրտիչ, Յիսուսի կարեւոր հըրաշքները, Առակներ, Երուսաղէմ մուտքը, Մատութիւնը, Զարչարանքը, Խաչելութիւնը, Յարութիւնը):

ՈՒՍՈՒԵԼԻՔ Ա.Հ.ՕԹ-ՔՆԵՐ ԵՒ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ .—
Նախորդ տարուաններու կրկնութիւնը. Առաւօտ լու-
սոյ (գ—զ), Փառք Յարութեան քո Տէր, եղիցի ա-
նոն Տևան օրինեալ, Գոհանամբ զբէն:

Շ. ԿԱՐԳ.

Պատմութիւն Հին ուխտի, ընդարձակօրէն:
Եկեղեցի երթալ, աղօթքի կենալ: Եկեղեցին
եւ իր առարկաները: Ծանօթացում ամէնէն կարեւոր
տոներու:

ՈՒՍՏԱՆԵԼԻ Ս.Ղ.ՕԹ.ԲՆԵՐ ԵՒ Մ.Ս.Ղ.Թ.ԱՆ.ԲՆԵՐ.—
Կրկնութիւն նախորդ տարուաններու: Արեւագալի եր-
գերը (Յարեւելից, Լոյս Չական համար):

Գ. ԿԱՐԳ.

Պատմութիւն Նոր ուխտի, ընդարձակօրէն եւ
Աւետարանէն ընթերցումներով:

Վերլուծում Հայր Մերի եւ Լերան Քարոզի:
“Հաւատոյ Հանգանակ, ը (բնագիր եւ ի-
մասու):”

Դ. ԿԱՐԳ.

Հայոց հեթանոսական կրօնիք: Քրիստոնէու-
թեան տարածումը եւ մուտքը Հայաստան (Արգար եւ
Թաղէոս): Հայց. Եկեղեցւոյ կազմակերպութիւնը (Քրի-
գոր Լուսաւորիչ եւ առաջին կաթողիկոսներ):

Հայց. Եկեղեցւոյ խորհուրդները: Ծէսեր եւ ա-
րարողութիւններ:

Հայց. Եկեղեցւոյ տօները: Առւրբեր:

Ե. ԿԱՐԳ.

Քրիստոնէական Եկեղեցւոյ վարդապետութիւնը:
Հայց. Եկեղեցին եւ իր դաւանաները:
Ուրիշ քրիստոնեայ Եկեղեցիներ:

Զ. ԿԱՐԳ.

Համառօտ պատմութիւն Հայաստանեայց եկե-
ղեցւոյ, հիմնարկութենէն մինչեւ մեր օրերը:

ՀԱՅԵՐԵՆ

ՅՈՂԵՑ

Ակսիլ ամբողջական մեթոսով (methode glo-
bale), սեւ տախտակի վրայ եւ պատկերներով:

ԿՈՒՇ

Ընթերցում գիրքով .— Բառերու ընդօրինա-
կում:

ԾԱ.Գ.Ի.Կ

Մահուն ընթերցում.— Կարճ նախաղասու-
թիւններ ընդօրինակել մաքուր զրով:

Կէտերու ծանօթացում՝ միայն անոնց արժէք-
ները մատնանշելով:

Տառերու ծանօթացում, գլխագրեր:

Ո. ՏԱՐԺ

Մահուն ընթերցում, նիւթը պատմել: Ծառ
պարզ բառերով կարճ նախաղասութիւններ շինել տալ
դասարանին մէջ եւ բերանացի:

Կարճ եւ հանելի ոտանաւորներ զոց արտասա-
նել:

Մատիտով կանոնաւոր ու մաքուր արտագրում
կարճ հատուածներու:

Չայնաւոր եւ բաղածայն տառեր, վանկերու բաժանում, թիւ, գոյականներն ու որակական ածականները ճանչնալ:

Սերտուած հատուածին պարզ եւ գործածական բառերէն սահմանափակ թուով ուղղագրել:

Սերտուած եւ ուղղագրուած բառերով կազմել կարճ նախադասութիւններ՝ նախ բերանացի եւ ապա գրաւոր:

Ը. ԿԱՐԳ.

Ընթերցում եւ բացատրութիւն:

Սրտասանական վարժութիւններ կարճ ուսանաւորներու:

Հատուածին մէկ կարճ կտորը մաքուր արտագրել մելանով:

Ուշադրութիւն հրաւիրել բերականական հետեւեալ երեւոյթներու վրայ. [գոյական, ածական եւ բայ, թիւ, հոլով, ժամանակ: Էական բայի պարզ ժամանակներ (սահմկն. ներկայ, անկատար, կատարեալ եւ ապանի), հումանիշ եւ հականիշ]:

Ուղղագրական փորձեր սերտուած դասէն զատուած պարզ պարբերութիւններու:

Շարադրութիւն՝ նախորդ տարուայ ծրագրով, աւելի ընդամուած՝ դարձեալ դասարանի մէջ, նախ բերանացի եւ ապա գրաւոր:

Գ. ԿԱՐԳ.

Սահուն արտայայտիչ ընթերցում, առողանութեան մասնաւոր ուշադրութիւն դարձնելով:

Բացատրութիւն բառերու եւ հատուածի:
Սրտասանութիւն կարճ հատուածներու՝ ուսանաւոր եւ արծակ:

Հատուածին մէկ կարճ կտորը մաքուր արտագրել մելանով: Գեղագրական վարժութիւններ:

Քերականութիւն՝ բառերու տեսակներն ու փոփոխութիւնները, միայն կանոնաւոր բայեր՝ հիմնական եղանակներով եւ ժամանակներով: Յաճախակի հրահանգներ:

Ուղղագրական փորձեր՝ սերտուած դասէն զատուած կարճ հատուածներու:

Շարադրական կարճ փորձեր դասարանի մէջ, տղոց առօրեայ կիանքէն վերցուած պարզ գէպքերու եւ գործողութիւններու շուրջ, նախ բերանացի եւ ապա գրաւոր: Կարելի է պատկերներէ ալ օգտուիլ:

Գ. ԿԱՐԳ.

Ընթերի եւ բացատրեալ ընթերցում:
Սրտասանութիւն սերտուած հատուածներու՝ ուսանաւոր եւ արծակ:

Մաքուր արտագրում, մելանով եւ առաւելացոյն մէկ էջ:

Գեղագրական վարժութիւններ:
Քերականութիւն՝ բառերու տեսակներ եւ անոնց փոփոխութիւններն ու պաշտօնը, կանոնաւոր, անկանոն եւ զարտուղի բայեր:

Յաճախակի հրահանգներ քերականութեան գրքէն, ինչպէս նաև կարգացուած հատուածին:

Ուղղագրական վարժութիւններ սերտուած

հատուածներու: Զրուցագրական փորձեր:

Շարադրական փորձեր՝ պարզ նիւթերու շուրջ (կարճ պատմուածքներ, նամակներ, պարզ նկարագրութիւններ)՝ համածայն նախապէս դասարանի մէջ ուսուցչի կողմէ աշակերտներուն հետ պատրաստուած ուրուագծի:

Ա. ԿՈ.ՐԳ.

Ընթերցում մասնաւորաբար արեւմտահայ հատուածիր պարզ էջերէ. — բացատրեալ ընթերցում:

Արտայայտիչ արտասանական վարժութիւններ, ընտրեալ ուսանաւոր եւ արծակ հատուածներու:

Քերականութիւն՝ ընդհ. վերաբաղ եւ լուծում, համածայնական կանոններ:

Զրուցագրական փորձեր:

ԾԱ.ԲԱ.ԴՐԱ.ԴԻ.ԹԻ.ԻՒ.՝ ուսուցիչն կողմէ սրուած նախագիծերու ընդլայնում, ուսանաւորներու արծակի վերածում, ընտրեալ դասերու գրաւոր ամփոփում՝ զիրին մասնաւոր ուշադրութիւն դարձնելով:

Զ. ԿՈ.ՐԳ.

Ընթերցում արեւմտահայ եւ երեմն արեւելահայ գրովներէ, վերջիններէն ընտրելով միայն պարզ լեզու ունեցողները: Վերլուծական բացատրութիւն: — Լեզուի նրբութիւններ գրագիտական նախնական զիտելիքներ եւ համառօտ ծանօթութիւններ գրականութեան ու գրագէտներու մասին:

Քերականութիւն՝ վերաբաղ, բառակազմութիւն եւ ուղղագրական կանոններ:

Զրուցագրական փորձեր:

Շարադրութիւն՝ ծանօթացում շարադրութեան մեթոտին: Շարադրութեան փորձեր տոհմիկ եւ ընտանի նիւթերու վրայ:

Նամակագրական կանոններ:

Գ. ԲԱ.ԲԱ.Մ

Պարզ հատուածներու ընթերցում եւ աշխարհաբարով բացատրութիւն: Ծանօթացում քերականական զիսաւոր ծեւերու, ընտրել մասնաւորաբար անոնք որ աշխարհաբարի հետ աղերս ունին:

Բառագիտութիւն եւ բառակազմութիւն:

Ը. ԲԱ.ԲԵ.ԲԷ.Կ

Ա. ԿՈ.ՐԳ.

Միայն քերանացի վարժութիւններ շրջապատի առարկաներու մասին, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով նեչումի եւ շեշտի նշգրտութեան:

Բ. ԿՈ.ՐԳ.

Ընթերցանութեան սկսիլ ամբողջական (global) մեթոտով. — քերանացի վարժութիւններ:

Գրելավարժութիւն, տախտակի վրայ գրուած բառերու արտագրում: Սրաբերէն համրել եւ թուանըշններ զրել:

Գ. ԿԱՐԳ

Ընթերցման վարժութիւններ պարզ եւ փոքր հատուածներու: — բառերու իմաստը բացատրել:

Արտագրում փոքր հատուածներու:

Ուշադրութիւն հրաւիրել թիւի եւ յօդի վրայ: — բառերը սորվեցնել միշտ իրենց յոգնակիներով:

Սերտուած հատուածէն սահմանափակ թուով պարզ եւ գործածական բառեր ուղղագրել:

Խօսելավարժութեան փորձեր պատկերի եւ ձանօթ առարկաներու վրայ:

Դ. ԿԱՐԳ

Ընթերցում կարճ հատուածներու եւ բացատրութիւն:

Արտասահմական թեթեւ վարժութիւններ:

Հատուածին կարճ մէկ կտորը մարուր արտագրել մելանով: — զրավարժութեան կանոններ:

Ուղղագրական վարժութիւններ սերտուած դասէն զատուած բառերու եւ պարզ պարբերութիւններու վրայ:

Ե. ԿԱՐԳ

Սահուն ընթերցում եւ բացատրութիւն:

Արծակ փոքր հատուածներ զոց ընել:

Ընթերցանութեան հատուածին չափաւոր մէկ մասը արտագրել մելանով:

Քերականութիւն՝ բառերու տեսակներն եւ անոնց փոփոխութիւնները:

Զրուցագրական վարժութիւններ՝ սերտուած դասէն զատուած պարզ հատուածներու: — Խօսելավարժութիւն:

Զ. ԿԱՐԳ

Մահուն ընթերցում եւ բացատրութիւն արարելն լեզուով:

Առանց ձայնական նշաններու ընթերցում:

Արտասահմութիւն արծակ եւ ոտանաւոր հատուածներու:

Մաքուր արտագրում:

Քերականութիւն՝ բառերու պաշտօն: — համաձայնութեան կանոնները:

Զրուցագրական վարժութիւններ:

Խօսելավարժութիւն:

ՓՐԱՆՍԵՐԻՆ

Ա. ԿԱՐԳ

Ակսիլ ամբողջական մեթոսով (methode globale), սեւ տախտակի վրայ եւ պատկերներով: Ակսիլ պարզ բառերով եւ հնտզինտէ անցնիլ պարզ նախադասութիւններու ընթերցման: — Տարւոյն կիսուն գրերու ձանօթացում:

1—100 թիւերու ֆրանսերէնը սորվեցնել:

Տարւոյն վերջերը պատկերներու եւ ձանօթ առարկաներու վրայ խօսելավարժութեան շատ պարզ ու սահմանափակ բառերով բերանացի փորձել:

Գրավարժութիւն՝ տախտակի վրայ գրուած
բառերու մաքուր արտագրումով գոհանալ:

Ա. ԿԱՐԳ.

Ընթերցման վարժութիւններ .— հատուածին
բառերուն նշանակութիւնը եւ հատուածին խմաստը
հայերէն լեզուով:

Արտագրում փոքր հատուածներու, գրավար-
ժութեան փորձեր:

Ուշադրութիւն հրաւիրել թիւի եւ յօդի վրայ
(բառերը սորվեցնել միշտ յօդով):

Սերտուած հատուածին պարզ եւ գործածա-
կան բառերէն սահմանափակ թուով ուղղագրել:

Սերտուած եւ ուղղագրուած բառերով կազմել
կարճ նախադասութիւններ, նախ բերանացի եւ ապա
գրաւոր:

Խօսելավարժութեան փորձեր պատկերներու
եւ ծանօթ առարկաներու վրայ:

Գ. ԿԱՐԳ.

Ընթերցում կարճ հատուածներու եւ թարգմա-
նութիւն .— նիւթը ֆրանսերէն լեզուով պատմել տա-
լու փորձեր:

Արտասանական վարժութիւններ շատ կարճ
ուսանաւորներու:

Հատուածին կարճ մէկ կտորը մաքուր արտա-
գրել մելանով .— զրավարժութեան փորձերու շարու-
նակութիւն:

Քերականութիւն՝ գոյական, ածական, թիւ եւ

սեռ: Etre, avoir եւ առաջին խումբի բայերու խոնար-
հումը պարզ ժամանակներով, հարցական եւ ժխտա-
կան ձեւերով:

Աւղագրական փորձեր սերտուած դասէն զատ-
ուած պարզ պարբերութիւններու:

Վերոյիշեալ բայերով հայերէն կարճ նախադա-
սութիւններ ֆրանսերէնի վերածել դասարանի մէջ
նախապատրաստական աշխատանքէ մը վերջո:

Դ. ԿԱՐԳ.

Մահուն ընթերցում, առողանութեան մասնա-
ւոր ուշադրութիւն զարձնելով: Բառերու բացատրու-
թիւն: Հատուածը բացատրել ֆրանսերէն լեզուով, եր-
բեմն թարգմանել հայերէնի:

Արտասանական վարժութիւններ կարճ հատ-
ուածներու՝ ուսանաւոր եւ արծակ:

Հատուածին մէկ կարճ կտորը մաքուր արտա-
գրել մելանով.— զեղագրութիւն:

Քերականութիւն՝ բառերու տեսակներն ու փո-
փոխութիւնները:

Միայն կանոնաւոր բայեր՝ հիմնական եղա-
նակներով եւ ժամանակներով: Յանախակի հրահանգ-
ներ:

Աւղագրական փորձեր՝ սերտուած դասէն
զատուած կարճ հատուածներու:

Ծանօթ բայերով պատրաստուած հայերէն նա-
խադասութիւններու ֆայերէնի վերածում, նախ բերա-
նացի եւ ապա գրաւոր:

Ընթերցման հատուածէն զատուած բառերով
եւ բացատրութիւններով նախադասութիւններ շինել

դասարանին մէջ, նախ բերանացի եւ ապա գրաւոր:

Ա. ԿՈՐՊ.

Սահուն ընթերցում եւ բացատրութիւն ֆրանսերէն լեզուով:

Ոտանաւոր հատուածները արծակի վերածել բերանացի.— բառերու զանազան իմաստներ, հոմանիշներ, հականիշներ, բառերու ընտանիք:

Արտասանութիւն՝ արծակ եւ ոտանաւոր հատուածներու:

Մաքուր արտագրում եւ գեղագրական կանոններ:

Քերականութիւն՝ բառերու աեսակներ եւ անոնց փոփոխութիւններն ու պաշտօնը: Գործածական անկանոն բայերու խոնարհումը եւ գործածութիւնը նախադասութիւններու մէջ . . Ստորադասականի գործածութիւնը եւ ընդունելութիւններու համաձայնութեան հիմնական կանոնները:

Ուղղագրական փորձեր սերտուած հատուածէն.— Զրուցագրութիւն:

Հայերէնէ ֆրանսերէն վերածման աշխատանքը շարունակել նոյն մեթոսով:

Պարզ եւ կարճ շարադրութեան փորձեր, դասարանի մէջ, նախ բերանացի եւ ապա գրաւոր:

Զ. ԿՈՐՊ.

Սնթերի ընթերցում հատընտիր արծակ եւ ոտանաւոր հատուածներու եւ բացատրութիւն: — Բառերու բուն եւ փոխաբերական իմաստը, յատկարա-

նութիւններ, հոմանիշներ, հականիշներ, բառերու ընտանիք:

Արտայայտիչ արտասանութիւն արծակ եւ ոտանաւոր հատուածներու:

Քերականութիւն՝ լրացում եւ վերաբաղ . — նախնական ծանօթութիւններ համաձայնական կանոններու (Syntaxe):

Ուղղագրական լայն փորձեր եւ զրուցագրութիւն:

Շարադրութիւն՝ ուսուցչին կողմէ տրուած նախագիծներու ընդլայնում, ոտանաւորներու արծակի վերածում:

Նամակագրական կանոններ եւ փորձեր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ԿՈՐՊ.

Հայկական աւանդավէպեր եւ հէքեաթներ, նահապետներ, առաջին թագաւորներ, ժողովրդական զիւցազններ (Առիւծ Մհեր, Սասունցի Դաւիթ, Տորք Անգել, Անդրանիկ):

Յ. ԿՈՐՊ.

Հայոց աւանդական պատմութիւնը, սկիզբէն մինչեւ Վարդան (Ե. դար):

Գ. ԿԱՐԳ.

Համառօտ վերաբաղէ մը ետք, Հայոց պատմութիւնը շարունակել մինչեւ մեր օրերը, ամենակարեւոր դէպքերով եւ դէմքերով, մատնանշելով մասնաւորաբար հայ. քաղաքակրթական երեւոյթներն ու դէմքերը:

Դ. ԿԱՐԳ.

I.— Նախապատմական դարեր (նախամարդը եւ իր գիւտերը).— Ինի ժողովուրդներ (Զինացիք, Հնդիկներ, Երայեցիք, Փիւնիկեցիք, Ասորաբելացիք, Եզիզտացիք), Մարեր եւ Պարսիկներ, Յունաստան, Աղքասանտը՝ եւ իր պետութեան բաժանումը:

II.— Հայաստանի նախաբնիկներն ու դրացիները (Ուրարտացիք, Հաթեր եւ Փոխացիներ) .— Արմէններու գաղթը. — Օտար գերիշխանութիւն՝ մինչեւ Սելեւկեան իշխանութիւն:

Ե. ԿԱՐԳ.

I.— Հոռմայեցիք (հիմնարկութիւն Հռոմի, առաջին գրաւումները եւ Կարկեդոն, հասարակապետութիւն եւ Կայսրութիւն, Արեւելքի գրաւումներ:) — Բաժանում Հոռմէական պետութեան եւ Հռոմի անկումը: — Միջին դար (Արեւելքեն՝ Բիւզանդացիք, Պարթևներ, Պարսիկներ եւ Արաբացիք, Սելծուք եւ Մոնկուարշաւանքներ, Արեւմուսքեն՝ բարբարոսներու արշաւանքը, նոր պետութեանց կազմութիւն, աւատականութիւն, ասպետութիւն, Խաչակիրներ՝ մինչեւ Կ. Պոլսոյ առումը):

II.— ՀՅՅ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Սելեւկեան տիրապետութենէն մինչեւ Ռուբինեան իշխանութեան անկումը (Արտաշիսեան հարաստութիւն, Քրիստոնէութեան դարձ, Արշակունիներ, Ոսկեդար, Յոյն եւ Պարսիկ, Հռոմ եւ Պարթեր, Արաք եւ բիւզանդական մրցակցութիւններ եւ տիրապետութիւններ, Բագրատունիներ, Անիի կործանումը, Ռուբինեանք եւ շփում Արեւմուտիքի հետ):

Զ. ԿԱՐԳ.

I.— Նոր դարեր (գիւտեր, վերածնութիւն, Եւրոպական նոր պետութիւնները՝ Ավանիա, Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, Ռուսիա, Միացեալ նահանգներ, Թուրքիա). Ժամանակակից պատմութիւն (Ֆրանսական յեղափոխութիւն եւ 19 րդ դար). — Նորագոյն շրջան (Ընդհանուր պատերազմ, Ռուսական յեղափոխութիւն մինչեւ մեր օրերը): — Ուրուագիծ Սուրբոյ պատմութեան:

II.— ՀՅՅ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Հայերը Թուրք, Պարսիկ եւ Ռուս գերիշխանութեան տակ, ազատագրական պայքար եւ Դաւիթ պէէկ. — Հայկական վերածնունդ եւ յեղափոխական շարժում. — Հայերը ընդհանուր պատերազմի ընթացքին, հայ. պետութեան ծնունդն ու ներկայ կացութիւնը. — Ուրուագծում հայ մշակոյթի պատմութեան:

ԾԱՆՈԹ. (Գ. Ե. և Զ. կարգերու համար.)

Մանաւոր ուշադրութիւն դարձնել քաղաքակրթական երեւոյթներու եւ դէմքերու, ինչպէս նաև պատմական աշխարհագրութեան վրայ:



ԱՇԽԱԲՀԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Ա. ԿԱՐԳ.

Կողմեր. — Աշխաբհագրական բացատրութիւններ (ցամաքային եւ ջրային ծեւաւորումներու մասին տարրական ծանօթացում, մնկնելով շրջապատէն). — Պատկերով եւ կաւով փորձառական դասեր:

Բնակավայրի ծանօթացում (դասարանը, դրաբոցը, փողոցը, թաղը, շուկան, քաղաքը իր շրջականերով):

Բ. ԿԱՐԳ.

Առաջին կարգի ընթացքը կրկնել քարտէսի վրայ:

Ցամաքներ, ծովեր, ովկիանուններ, զլիսաւոր գետեր, լիճներ, լեռներ, կղզիներ. — Դլիսաւոր երկիրներ եւ անոնց մայրաքաղաքները՝ միշտ քարտէսի վրայ:

Գ. ԿԱՐԳ.

Երկրագունատի ծանօթացում (Առանցք, բնենուններ, երկրի շարժումները, գոտիններ, գիծեր, գոտիններու ինքնայտուկ կենդանիններ, բոյսեր եւ մարդկային ցեղեր): — Երկնային մարմիններու մասին համառոտ տեղեկութիւններ. — հայրենագիտութիւն (Հալէպ, Սուրիա):

Գ. ԿԱՐԳ.

Զորս աշխարհամասեր (բացի եւրոպայէ)՝ բընական, քաղաքական, տնտեսական. — Քարտիսագծում:

Ե. ԿԱՐԳ.

I. — Սուրիա, բնական, քաղաքական եւ տրնտեսական. — Քարտիսագծում:

II. — Հայաստան՝ արդի եւ պատմական:

Զ. ԿԱՐԳ.

Եւրոպա՝ բնական, քաղաքական եւ տնտեսական. — Գաղթավայրեր. — Քարտիսագծում:

ԹԱՌԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԿՈՒՇՆ

Թուարկութիւն 1 - 20. — Ճանչնալ թիւերը, կարդալ ու գրել. — Թուարկութիւնը պէտք է ըլլայ առարկայական (հատիկներով, գնդիկներով):

1 - 20 գումարումի եւ հանումի առարկայական վարժութիւններ:

ԺԱՂՅՈՒ

Թուարկութիւն 1 - 50 եւ ապա մինչեւ 100; միշտ առարկայական: Կարդալ ու գրել:

Համբել մինչեւ 100, զոյգ եւ անզոյգ թիւերով
(2 առ 2, 3 առ 3):

Գումարում եւ հանում, տարեշրջանի առաջին
կիսուն միաւորներով, իսկ երկրորդ կիսուն տասնա-
տրներով, պայմանաւոր գումարը 100 ը չանցնի: —
Բերանացի եւ երբեմն զրաւոր վարժութիւններ:

Բազմապատկութեան աղիւսակ մինչեւ 5:

Ա. ԿԱՐԳ.

Թուարկութիւն 1 - 1000

Գումարում եւ հանում, բերանացի եւ զրաւոր
հրահանգներով:

Բազմապատկութեան աղիւսակը ամբողջացը-
նել (1 - 10): Բազմապատկութեան վարժութիւններ՝
բերանացի եւ զրաւոր, բազմապատկողը միաւոր ըլ-
լալու պայմանաւ:

Բաժանում, բերանացի եւ զրաւոր նախնական
վարժութիւններով, բաժանողը փոքր միաւոր մը ըլլա-
լու պայմանաւ:

Գործնական պարզ խնդիրներ:

Բ. ԿԱՐԳ.

Թուարկութիւն մինչեւ 10000: — միաւորներ,
տասնաւորներ, հարիւրաւորներ եւ հազարաւորներ:

Զորս գործողութիւններ, մտաւոր եւ զրաւոր:
Գործնական խնդիրներ չորս գործողութեան վրայ:

Գ. ԿԱՐԳ.

Թուարկութիւն մինչեւ 1 - 1000000. — թուա-

նրշանի մը բացարձակ եւ յարաբերական արժէքները:
Զորս գործողութիւններ՝ մտաւոր եւ զրաւոր
վարժութիւններով:

Գործնական խնդիրներ:

Տասնորդական կոտորակ, չորս գործողութիւն-
ները, գործնական խնդիրներ՝ խառն թիւեր:

Երկրաչափական ծանօթութիւններ (կէտ, գիծ,
ուղղահայեաց, զուգահեռուական, անկիւններ, եռանկիւն,
քառանկիւն, բազմանկիւն), գործնական վարժութիւն-
ներով:

Դ. ԿԱՐԳ.

Տասնորդական թիւեր, վերաքաղ:

Մեթրական գրութիւն՝ մեթր, լիդր, կրամ,
ստորապատիկներ եւ բազմապատիկներ:

Տեղական չափերու, կշիններու եւ դրամներու
մասին ծանօթացում, վերածում եւ գործնական խըն-
դիրներ:

Հասարակ կոտորակ, — ընդհանրութիւն . —

Տասնորդականի վերածում:

ԵՐԿՐՈՋԱՓՈՒԹԻՒՆ: Երկրաչափական պատ-
կերներու մակերեսները գտնել, շրջանակ, վարժու-
թիւններ ու խնդիրներ:

Երկրաչափական մարմիններու ծանօթացում
եւ վարժութիւններ:

Ե. ԿԱՐԳ.

Մեթրական գրութիւն, տեղական չափեր, փո-
խաղարձ վերածումներ եւ խնդիրներ:

Տեղական եւ օտար զլիսաւոր դրամներ եւ ա-
նոնց փոխադարձ վերածումներն ու խնդիրներ:

Բաժանականութիւն. — Նախնական թիւեր:

Հասարակ կոտորակ, յատկութիւն, պարզում,
հասարակ յայտարար, տասնորդականը հասարակ կո-
տորակի վերածել եւ փոխադարձաբար, վարժութիւն-
ներ ու խնդիրներ:

ԵՐԿՐԱ.ԶՈ.ՓՈՒԹԻՒՆ՝ մակարդակ երկրաչափու-
թեան տարրերն ու ձեւերը, անոնց մակերեսները գտնել:
Գործնական խնդիրներ:

Երկրաչափական գծագիտութիւն:

Զ. ԿԱՐԳ.

Կոտորակներու վերատեսութիւն եւ խառն
խնդիրներ. — քառակուսի արմատ:

Համեմատութիւն, ուղիղ եւ խոսոր. — երեքի
կանոն՝ պարզ եւ բարդորեալ. — հարիւրին այսչափ
շահ եւ վլաստ. —

Պարզ տոկոսի կանոն. — ընկերութեան կա-
նոն. — խառնուրդի կանոն:

Գ.ԲԱ.ՀԱ.ՇԻՆ՝ զբերու գործածութիւն. — պարզ
խնդիրներու գրահաշուական լուծումը:

ԵՐԿՐԱ.ԶՈ.ՓՈՒԹԻՒՆ՝ մակերեւոյթներու վերա-
բաղ:

Երկրաչափական մարմիններ, անոնց ծաւալը
չափել: Գործնական խնդիրներ:

Երկրաչափական գծագիտութիւն:

ԱՌԵԽՏՐՍԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Եւ

ՏՈՄԱ.ՐԱԿԱ.ԱՌԻԹԻՒՆ

Զ. ԿԱՐԳ.

Գիտելիք, փոխանակագիր, մուրհակ, չէք, տո-
կոս, զեղչ, հասարակաց եւ միջին վճարօր. — Առեւտը-
րական գործառնութիւններ:

Տոմարներ՝ ձեռատետր, օրհաշիւ, մայր հաշիւ:

ԻՐԱԳ-ԻՏՈՒԹԻՒՆ

Ա. ԿԱՐԳ.

ԱՐՄՏԻՐ ԵՒ ԶՈՆ.ԶԱՆ ԽՄՈՐՆԵՐ. — ցորեն,
հանար, զարի, կորեկ, եզիպտացորեն եւյն. կորկոտ,
ծաւար, թելահայս, մաքառոնի, տրէ (էվրիշթէ), բրինձ:

ԲՈՆ.ԶՈ.ՐԵԴԻՆՆԵՐ ԵՒ ՀՈ.ՄԵՄՆԵՐ. — Լուրիա,
ոլորն, բակլայ, ոսպ, աղին արտադրութիւնը, զանա-
գան համեմներ:

ԻՒԳԱՅԻՐՆ ՆԻՒԹԵՐ. — Զէթ եւ զանազան բո-
սային իւղեր:

ՄԵՐ ՄՈ.ՐՄԻՆԵՐ. — Աչք, ականջ, քիթ, քե-
րան: — Զուր եւ օճառ. բերնի, ձեռքի, ոտքերու մաքու-
թիւն: — Շնչել մաքուր օդ եւ քիթէն, մարմնամար-
զին օգուտները, մաքրութիւն մորթի:

Ընտանի կենդանիներ եւ անոնց օգտակարու-
թիւնը (շուն, կատու, ձի, էշ, ջորի, ուղու):

Բ. ԿԱՐԳ.

ԲԱ.ՄՊԱԿ, տունկը, պտուղը եւ ենթարկուած
փոփոխութիւնները:

Բամպակի ճարտարարուեստի զանազան փուլերը:

ԲՈՒԽՐԴ ԵՒ ՄԵՏՈՒՅՍ. — Բուքդին ենթարկուած զանազան ձեւափոխութիւնները, շերամին կերպարանափոխութիւնները, բուքդէ եւ մնտաքսէ զանազան հիւսուածքներ:

ՎՈՒԾ ԵՒ ԿԱՆԵՓ, յաջորդական փոփոխութիւններ որոնց կ'ենթարկուին վուշն ու կանեփը զանազան տեսակի հիւսուածքներուն վերածուելէ առաջ:

ՄԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ. — Մարսողական խողովակ, ինչպէս կը շնչենք, արիւն, սիրտ, զլուխ, իրան եւ զգայարանքներ. իւրաքանչիւր մասի առողջապահութիւնը պէտք է յաջորդէ կազմախօսական շատ պարզ ձանօթութիւններուն:

Ինտանի անասուններ՝ կով, եղ, մեղու = մեղր, խոզ, ոչխար, այծ, հաւոնցի կենդանիններ:

Բոյսեր, ծաղիկ, պտուղ, պտղատու ծառեր. — օգտակար բոյսեր (գետնախնձոր, հակնդեղ, շաքարեղիզ, սոխ, սխոռոր եւայլն):

Գ. ԿԱՐԳ

Կաշի, մորթ, մուշտակ եւ կենդանական այլ նիւթեր, ինչպէս եղջիւր, ոսկոր, սոսինձ եւայլն:

ՇԻՆՈՒԱԾԱՆՆԵՒԹԵՐԸ քարեր եւ փայտեր, շաղախ, ցիմէնթ, զան, կիր, աղիւս, կղմինտր, — Մատաղներ, ապակի. — կաւեղիններ եւ յախնապակի:

Մարմիններու երեք վիճակները. — Զուր, շողի, օդ, ջեռուցում, լուսաւորութիւն:

ՄԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ. — Մարսողական գործարան, մարտողութիւն, առողջապահական լայն ձանօթութիւններ տալ իւրաքանչիւր գործարանի մասին:

շրջան, առողջապահութիւնը. — թոք, շնչառութիւն, առողջապահութիւնը. — կմախք, դնդերներ, շարժում, մարմնակրթանը:

Վայրի կենդանիններ եւ թուզուններ: Մնտառի ծառեր:

Դ. ԿԱՐԳ

Մետաղներ, անոնց ձեւափոխութիւնները եւ գործածութիւնը, երկաթ, պղինձ, զենկ, անազ, կապար, նիքէլ, թափծու, պողպատ, անազապղինձ (bronze), արոյր (laiton):

Զեռուցում, լուսաւորութիւն եւ անոնց զանա նիւթերը:

Թուղթի, խաւաքարտի, գծագրութեան նիւթերու, մատիտներու, գրիններու մելանի պատրաստութիւն. — Տպագրութիւն, վիմագրութիւն:

ՏՈՐԱԲԱՆԱԿՈՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ. — Օդ, ջուր, բնածուխ, խմորում, ալբոլ, զանազան ըմպելիներ, ծծումք եւ թթուններ. — Փոսֆոռ, բօթաս, soude, օհառններ:

Ե. ԿԱՐԳ

ԿԵՆԳԱՆԱԲԱՆԱՌԻԹԻՒՆ. — Դասակարգութիւն եւ իւրաքանչիւր գաւակարգի կազմախօսական հիմնական յատկանիշները:

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ. — Մարմնի զանազան գործարանները, կազմախօսութիւն եւ անոնց գործոնէութիւնը. — Առողջապահական լայն ձանօթութիւններ տալ իւրաքանչիւր գործարանի մասին:

ԲՈՒԽՐԱԲԱՆԱՌԻԹԻՒՆ. — Բոյսի մը զանազան

մասերը, անոնց կազմախօսութիւնն ու պաշտօնը: Բոյսերու դասակարգութիւնը, իւրաքանչիւր դասակարգի յատկանիշներն ու զինաւոր տիպարները:

Դաշտի երկրագործական աշխատութիւններու մասին համառու տեղեկութիւններ. — Գործիքներ, զինաւոր մշակութիւններ եւ պարարտացում:

Զ. ԿԱՐԳ.

ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Մարմիններու երեք վիճակները. — ԶԴՈՂՈՒԹԻՒՆ, լծակներ, կշիռ, տեսակարար ծանրութիւն. — Զբակայութիւն, իրերահաղորդամաններ, Բասքալի սկզբունքը եւ հեղուկներու ճնշումը: — ՄԹՇԱԼՈՐՏԱԿԱՆ ձՆԵՑՈՒՄ, զրհաններ, ծանրաշափ. — ԿԱԶԵՐՈՒ ձՆԵՑՈՒՄԸ, անգայտաչափ. — Մարիօթի օրէնքը. — ԶԵՐՄՈՒԹԻՒՆ, իր ազդեցութիւնը մարմիններու վրայ, ջերմաչափ, շոգի եւ շոգեշարժ մեքենայ:

ՕԴԵՐԵԽՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ (ամպ, մշուշ, անծրեւ, ծիւն, կարկուտ, ծող եւլին.): — ԼՈՅԱ, ուղղութիւնն ու արագութիւնը, ցոլացում, բեկրեկում, ոսպնեակ, խոշորացոյց, ակնոց, մանրադէտ, հեռադիտակ, լուսանկար, ճերմակ լոյսի տարբաղադրութիւնը. — ՁՈՅՆ, փոխանցում, արագութիւնը, արձագանգ, ծայնագիր: — ՄԱՐԵԽԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ, եւ կողմնացոյց. — ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, վատ եւ լաւ հաղորդէ մարմիններ, շանթարգել: — Ելեքտրական հոսանքներ, բարդեր, զուրի տարբաղադրութիւնը, Ռամըստէնի մեքենան, տինամօ, ելեքտրական կիրարկումներ (լոյս, ելեքտրական զանգակ, հեռագիր, հեռածայի,

անթել հեռագիր, ելեքտրական համրակառք, galvanoplastie):

ՏԱՐՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — պարզ եւ բաղադրեալ մարմիններ:

Գլխաւոր տարրեր՝ զրածին, թթուածին, ազօթ, ածուխ, բլու, պոոմ, իօտ, ծծումբ, ֆուֆոո եւ մետաղներ:

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — երկրիս կեղեւը. — Ժայռերու տեսակներ. — մրբային եւ հրալին ժայռեր. — երկրաշարժ, հրաբուխ, երկրաբանական շրջաններ:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ա. ԿԱՐԳ.

Ա. Բարյոյական զգացումի զարթօնքը (խիղճը. — բարին եւ չարը. — պարտականութեան զգացումը):

Բ. Մարմնի կրթութիւն. — մաքուր ըլլալու անհրաժեշտութիւնը:

Գ. Մտքի կրթութիւն. — զարգացնել իմացականութիւնը:

Դ. Սրտի կրթութիւն. — բարին, ճշմարիտն ու զեղեցիկը:

Ե. Նկարագրի կրթութիւն. — կամքի ոյժը ձեռք բերելու միջոցներ:

Զ. ԿԱՐԳ.

— Բնուանիք, հասարակութիւն, ազգ, մարդկութիւն:

— Արդարութիւն, իրարօգնութիւն, համազոր-
ծակցութիւն, համերաշխութիւն:

— Կրօնական զգացում եւ պարտականութիւն.

ներ:

Ք.Պ.Ջ.Ա.Ք.Ց.Ի.Ն. ԵՒ Ք.Ա.Գ.Ա.Ք.Ա.Ց.Ի.Ա.Կ.Ա.Ն
ԿՐԹՈՒԹԻՒՆ:

1. Սիբել հայրենիքը, անոր օրէնքները, դրօշը:

2. Ազգ. Սահմանադրութիւն:

3. Կիւիկիոյ Կաթողիկոսութիւն եւ Բերիոյ թե-
մու:

4. Կառավարական ձեւեր. — Օրէնքները ի՞նչ-
պէս կը շինուին. — Արդարութեան բաշխում եւ գոր-
ծադիր իշխանութիւն:

5. Աիւրիոյ վարչածեւր:

ԱԹ-ՆԵՐԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Զ. ԿԱՐԳ

Նախնական ծանօթութիւններ. — Տանտիկի-
նին պարտքերը: — Ընդհ. առողջապահութիւն. — ըն-
թացիկ հիւանդութիւններու նախնական դարմանները:
Բնակարան, կահկարասի, խոհանոց, մաքրու-
թիւն, սնունդին կարեւորութիւնը, կերակուրներու
պատրաստութիւն. — Պտուղներ, պահածոններ, ըմպելի-
ներ, անուշեղիններ:

Մանկատածութեան նախնական ծանօթութիւն-
ներ:

Գ-ԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ԿԱՐԳ

Ազատ գծագրութիւն. — Շատ պարզ գործա-
ծական իրերու, տղայական խաղալիքներու պարզ ձև-
ւագծում:

Բ. ԿԱՐԳ

Աշակերտներու առջեւ դրուած պարզ առար-
կաններ գծագրել մատիտով. — Ազատ գծագրութիւն՝
համածայն իրագիտական դասերու:

Գ. ԿԱՐԳ

Աեւ մատիտով առարկաններու, բոյսերու, կեն-
դանիններու գծագրութիւններ, իրականին վրային. —
Զարդանկարչական տարրական փորձեր. — իրագիտա-
կան դասերու ազատ գծագրութիւն:

Դ. ԿԱՐԳ

Նոյնը աւելի ընդլայնուած:

Ե. ԿԱՐԳ

Ազատ գծագրութիւն (մատիտ, բասթել, ջրա-
ներկ). — Աշակերտին առջեւ դրուած իրերու պատկեր-
ները գծել, առանց քանակի եւ չափելու:

Զ. ԿԱՐԳ

Նոյնը՝ աւելի ընդլայնուած, — նեռանկարի նախ-
նական սկզբունքներու մասին պարզ ծանօթութիւններ:

ԶԵՌԱԳՈՐԾ

Ա. ԿԱՐԳ

Քրոշէ, հաստ կտաւի վրայ կար, կոճակ կարել,
կարկտուք, թոփօ, ֆանելա, պատիկ շալ, նշան դնել:

Բ. ԿԱՐԳ

Նշանագրեր շինել, սովորական կար, քռոշէ,
թոփօ:

Գ. ԿԱՐԳ

Շարունակութիւն նախորդ տարուայ ծրագրին:

Դ. ԿԱՐԳ

Վարժութիւններ բանըվայի վրայ, նիշեր բանալ
ու հիւսել:

Ե. ԿԱՐԳ

Սովորական կար, կարկտուք, — կարերու տես-
սակներ. — օղակի զանազան տեսակներ. — թելքաշներ,
բանըվայի եւ էթամինի գործ. — քողի վրայ ասեղնագործ:

ԶԵՒԾԻՑՈՒԹԻՒՆ,

Զափառութեան եղանակ. — Զեւագծում ճերմա-
կեղինի, գիշերանոցի եւ ցայզազգեստի: Յիշեալ հազուստ-
ները ծեւելու փորձեր ընել պարզ թուղթերով: Գործնա-
կան կերպով ծեւել եւ կարել ճերմակեղին: Վարժութիւն-
ներ կարի զանազան տեսակներու: Յետկար, խծիակ, շուլ-
լալ, թելդակ ու օղակ հիւսել, լաթով օղակ կազմել, զար-
դարանքի վերաբերեալ զանազան ասեղներ:

Զ. ԿԱՐԳ

Զեռագործի նախորդ տարուայ ծրագրին շարու-
նակութիւնը:

ԶԵՒԾԻՑՈՒԹԻՒՆ

Զեւագծել պարզ իրանազգեստ, հակեալ, կէս
հակեալ եւ պարզ թեւեր, զաքքազ քղանցք: Պոլէո,
զուաֆ, կրկնոց, թիկնոց, զանազան ծեւով օծիքներ,
ուստական շապիկ եւալլն:

Զեւել եւ կարել պարզ ու պատշաճ դպրոցա-
կան հազուստ մը:

(Թէ Ե. եւ թէ Զ. կարգի ձևագծումի պահերուն,
ուսուցչուհին պէտք է կրկնէ երկրաչափական անհրաժեշտ
եւ գործնական գիտելիքները):

ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. ԿԱՐԳ

Հիւսուածքի եւ ծալլուածքի վտքրիկ վարժու-
թիւններ (թուղթ, յարդ, կնիւն եւալլն):

— Թուղթի վրայ այբուբենի երկաթազիր ձե-
ւերը եւ թուանշաններ կտրել ու փակցնել: — Դիմա-
ստուերներ կտրել ու փակցնել թուղթի վրայ:

Բ. ԿԱՐԳ

Նախորդ տարուայ ծրագրին շարունակութիւնը:

Գ. ԿԱՐԳ

Դիրք մը նորոգել. — Տետրակ մը կազմել. —
Խաւաքարտէ պարզ առարկաներ շինել. — Կաւի աշ-
խատանք:

Դ. ԿԱՐԳ

Կազմաքարութիւն ու երկրաչափական պատ-
կերներու խաւաքարտով իրականացում. — Խաւաքար-
տով աւելի բարդ առարկաներ շինել:

Ա. ԿՈՐԳ.

Կողովաշինութիւն . — Փայտի աշխատանք,
(découpage).

Զ. ԿՈՐԳ.

Փայտի փորագրութիւն . — Մետաղեայ թիւով
զործածական առարկաներու շինութիւն:

ԵՐԳ - ՉԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐՏԻԶ

Մանկական միածայն երգեր, խմբական, մերթ
ընկերացած մարզանքի, կշռական շարժումներու և
պարի:

Ա. ԿՈՐԳ.

Միածայն երգեր, մինակ կամ խմբական (ազ-
գային, եկեղեցական), Մաղթանքներ:

Բ. ԿՈՐԳ.

Շարունակութիւն նախորդին, ընդլայնուած:

Գ. ԿՈՐԳ.

Նոյն վարժութիւնները:

Դ. ԿՈՐԳ.

Ազգային եւ գեղջուկ երգեր, միածայն կամ բազ-
մածայն . — Նախագիտելիք ձայնագրութեան:

Ե. ԿՈՐԳ.

Բազմածայն երգեր, solfège:

Զ. ԿՈՐԳ.

Շարունակութիւն նախորդ տարրուան:

ԵԱՆԹ . — Գործիական երաժշտութիւն՝ կամաւոր,
խառն գասարանով:

ՄԱՐԶԱԿԱՔ

ՄԱՆԿԱՎԱՐՏԻԶ

Շուէտական նախնական աստիճանով մարզանք
(ոտք, ծեռք, իրան, զլուխ): Խաղերգ, պարերգ (հայ-
կական կամ օտար), շրջանակով, գունտով եւլին: Կը-
ռական բալեր:

Ա. ԿՈՐԳ.

Շուէտական մարզանք, շնչառութիւն, բալուածք՝
շարք կազմելով:

Բ. ԿՈՐԳ.

Նոյն՝ նախորդ տարրուան հետ:

Գ. ԿՈՐԳ.

Շարք կազմել (2 կամ 4ական), բալուածք,
վազք, ոստում, շուէտական մարզանք, շնչառութիւն:

Դ. ԿՈՐԳ.

Նոյն՝ նախորդ տարրուան հետ:

Ե. ԿՈՐԳ.

Իրկնութիւն նախորդ վարժութեանց եւ մար-
զական խաղեր:

Զ. ԿՈՐԳ.

Նոյն՝ նախորդ տարրուան հետ:



Պուման		Պուման																		
Առաջին	Բաժին	Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը									
Ա.	ԿՈՐԴ.	2	8	-	2	3	5	-	2	2	2	1	2	34						
Բ.	ԿՈՐԴ.	2	6	-	3	4	5	-	2	2	1	1	2	34						
Գ.	ԿՈՐԴ.	1	6	-	4	5	5	-	2	2	1	1	2	34						
Դ.	ԿՈՐԴ.	1	6	-	5	5	4	1	2	2	-	1	1	2	34					
Ե.	ԿՈՐԴ.	1	6	-	5	5	4	1	2	1	-	1	1	2	35					
Զ.	ԿՈՐԴ.	1	5	2	5	5	4	1	2	1	-	1	1	2	36					
Պուման		8	37	2	24	27	27	3	1	12	9	4	11	1	9	6	7	6	12	207

Պուման		Պուման																			
Առաջին	Բաժին	Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը			Հայոց պատկերագիրը										
Ա.	ԿՈՐԴ.	2	8	-	2	3	5	-	2	2	-	1	-	2	2	2	2	1	34		
Բ.	ԿՈՐԴ.	2	6	-	3	4	5	-	2	2	-	2	-	2	2	1	2	1	34		
Գ.	ԿՈՐԴ.	1	6	-	3	5	5	-	2	2	-	2	-	2	1	2	1	2	1	34	
Դ.	ԿՈՐԴ.	1	6	-	4	5	4	1	-	2	1	2	-	2	1	1	-	1	2	1	34
Ե.	ԿՈՐԴ.	1	6	-	5	5	4	1	2	1	-	1	2	1	1	-	1	1	2	1	36
Զ.	ԿՈՐԴ.	1	5	2	4	5	4	1	1	2	-	1	1	-	1	1	-	1	2	1	206
Պուման		8	37	2	20	27	27	3	1	12	9	4	11	1	1	10	7	7	12	6	

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՏԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

ա) Ազգ. վարժարանները կ'ունենան երկու բաժին.
Մանկապատճեն եւ Նախակրթարան:

բ) Մանկապատճենը կ'ունենայ 4 տարի, հետևեալ
կերպով.

Ծիլ (4 - 5 տարեկան), Բողբոջ (5 - 6), Կոկոն (6 - 7)
եւ Ծաղիկ (7 - 8):

գ) Նախակրթարանները կը բաղկանան 6 կարգե՝
հետևեալ կերպով.

Ա. կարգ (8 - 9 տարեկան), Բ. կարգ (9 - 10), Գ.
կարգ (10 - 11), Դ. կարգ (11 - 12), Ե. կարգ (12 - 13)
եւ Զ. կարգ (13 - 14 տարեկան):

դ) Տարիքի եւ այլ բացառիկ պայմաններու հար-
կադրանքի տակ, կարելի է Ա. կարգի մուտքը դիւրացր-
նելու համար բացառիկ կարգ մը եւս կազմել՝ բնդմեց
Ծաղիկի եւ Ա. կարգի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0237128

57. 436

